

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ



ԵՎՐՈՊԱՅԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԻ ԿՈՆՏԵՐԱՆՄԻ ՔՆՆԱՐԿՈՒՄԸ ԲՐՅՈՒՄԵԼՈՒՄ

(Դեկտեմբերի 8-9 2005 թ.)

Սույն թվականի դեկտեմբերի 8-9-ը Բրյուսելում (Բելգիա) տեղի ունեցավ Եվրոպայի Եկեղեցիների Կոնֆերանսի (ԵԵԿ) կողմից կազմակերպված գիտաժողով՝ նվիրված գլոբալիզացիայի հիմնախնդիրներին: Ժողովին ներկա էին 35-40 մասնակիցներ Եվրոպայի քաղաքներ Եկեղեցիներից:

Մայր Աթոռ Ս. Էջմիածինն այդ հանդիպմանը ներկայացնում էր Գևորգյան Նոզևոր Ճեմարանի փոխտեսուչ Նոզեշնորի Տ. Վազգեն արք. Նանյանը:

Սույն ժողովը նվիրված էր ԵԵԿ-ի «Եկեղեցի և հասարակություն» հանձնախմբի կողմից արդեն իսկ մշակված «Եվրոպական Եկեղեցիներն ապրում են իրենց հավատքը գլոբալիզացիայի համարեքստում» խորագիրը կրող փաստաթղթի քննարկմանը: Վերոհիշյալ փաստաթուղթը, որի վրա նախնական բավականաչափ աշխատանք էր տարվել, արժանացավ մասնակիցների ընդհանուր հավանությանը, սակայն, այդուհանդերձ, այն լիովին չէր համապատասխանում բոլոր ակնկալիքներին: Փաստաթղթի մեջ առկա էին հետևյալ թերությունները.

1. Այն չէր ներկայացնում Եվրոպայի ընդհանուր պատկերը,
2. Չափից ավելի էին շեշտադրվել տնտեսական, ընկերային և քաղաքական ոլորտները՝ մեծապես անտեսելով հոգևոր և կրոնական հարցերը,
3. Փաստաթղթի մեջ գլոբալիզացիան, իբրև երևույթ, ներկայացվում էր գերազանցապես իր բացասական կողմերով և անտեսված էին նրա դրական քաղաքացիական և հոգևոր դրսևորումները:

Աշխատանքային ընթացքը հազեցած էր և արդյունավետ: Երկու օր տևած ժողովական գործընթացը բաղկացած էր գեկույցներից և խմբերում ընթացող աշխատանքներից, ուր յուրաքանչյուր մասնակից հնարավորություն ունեցավ արտահայտելու թե՛ իր անհատական և թե՛ իր Եկեղեցու պաշտոնական մտքերումները:

ՎԱԶԳԵՆ ԱՐՔ. ՆԱՆՅԱՆ